

ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՄԸ

1937ի սկիզբները Պրիւսէլի Հայ Երիտաւարդաց եւ Պէլժաւայ Ուս. Միութիւնները ջովքովի եկած Գրադարանի մը Հիմը դրին Հայ Ակումբին մէջ: Նոյն Միութիւններէն բաղկացած Գրադարանի Յանձնախումբ մը կը վարէ գործերը եւ կը կազմակերպէ պարբերական բանախօսութիւններ: Նախապէս ամսական հազիւ հինգ դիրք կը կարդացուէր. հիմա այդ թիւը 60-70ի կը հասնի: Գնումներու կողքին՝ դպրութէն ալ բաւական դիրք նուիրողներ եղած են: Այս տարի ընդառաջ երթալով շատերու յայտնած փափաքին՝ բացուած է նաեւ հայերէնի դիւերային դասընթացը մը, որուն նըւիրուած են տեղւոյս ուսանողներէն ոմանք:

Իսկ անցեալ տարի, դադուքին մէջ հայ գրականութեան ճաշակը վառ պահելու նպատակաւ կազմակերպուած էր գրական մրցում մը, նիւթը ընտրելով պէլժաւայ կեանքէ առնուած նորավէպ մը: Ղրկուած էր հինգ ձեռագիր,

գիր, որոնցմէ մէկը նիւթէն դուրս նկատուած է: Քննիչ Յանձնախումբ մը բաղկացած՝ Պ.Պ. Ա. Զօպանեանէ, Հ. Տէր Ոսկիէ եւ Վ. Սարգիսեանէ, զնահատման ենթարկելով ստացուած ձեռագիրները ըստ իրենց լեզուին, ինքնատպութեան եւ գեղարուեստական կառուցուածքին՝ արդիւնքը հաղորդեց Գրադարանի Յանձնախումբին, որ իր կարգին հրապարակաւ յայտարարեց փետրուար 20ին Հայ Ակումբի մէջ: Ա. մրցանակի արժանացած է Պրիւսէլի Նուպարեան սաներէն Պ.Յ. Իսէկիւլեանի *) (Արեւելեցի) «Լօռա» նորավէպը եւ Բ. մրցանակին՝ Անվերսի ծանօթ անձնաւորութիւններէն Պ. Մ. Մայաթեանի (Լավա) «Տասը տարի ետք» նորավէպը: Ա. մրցանակը, 200 Ֆրանք, տրամադրուած է Պրիւսէլի Հայ Երիտաւարդաց Միութեան կողմէ, իսկ Բ.՝ 100 Ֆր., պէլժաւայ Ուս. Միութեան կողմէ:

ԳՐԱԿԱՐԱՆԻ ՅԱՆՁՆԱՅԻՆՈՒՄԲ

Լ Օ Ռ Ա

— Պիտի չերթա՞ս, ըսի ճարհատ, ձեռքերովս ուսերուն փարած մտերմօրէն ու այդ բառերուն տալով անդիմադրելի ուժգնութիւն մը:

Երկուքս ալ մեկնելու դիրքին մէջն ենք իր սենեակին մէջ առանց սակայն մեկնելու: Վերնայարկի մը վրայ թառող ուսանողական իր այդ խոցը կը դողալ մեր քայլերուն տակ ու կ'արձագանգէ մեր ձայներուն արտասովոր ելեւէջէն: Նախ մեղմ սկսեր էի, չափազանց համոզիչ բառերով. բայց յետոյ ստիպուել էի բռնանալ:

— Պիտի չերթա՞ս այդ աղլկան քով, կը հասկնա՞ս:

Իր պատասխանը միշտ խոշոր «ինչո՞ւ» մը կ'ըլլար: Ու այդ պոռացող «ինչո՞ւ»ին զէժ կը

զգայի թէ իմ փաստերս ալ բաւական մակերեսային էին: Կ'ըսէի թէ տեղ է, տեղ տ, ոեւէ գրաւչութիւն չունի: Նաեւ ի զո՞ւր իր խառնուածքն ու նկարագիրը վերլուծման կ'ենթարկէի, թէ ինք միշտ ծայրայեղութեան հակամէտ է, թէ անկարող է ինք մարմնին, սիրտին ու մտքին միջեւ անհրաժեշտ թումբեր մը կանդնել, ալ օր մը կրնայ գոյութիւն ունեցողներն ալ խորտակել ու յանձնուիլ ալիքներու քմալքին:

Երկուքս ալ Արեւելքէն եկեր էինք, միայն

*) Պ. Իսէկիւլեան իր գրական սկզբնաւորութիւնն ըրաւ արդէն այն գեղեցիկ քերթուածներով գործարար Եղեգեան ինքնամոռով հրատարակեց Անահիտի մէջ: (Մ.Խ.)

անոր մէջ Արեւելացիին աւելի տեղ ունէր թէ՛ կազմուածքով եւ թէ՛ բմբունումներով: Բանական էր իր հպարտ ուսերուն վրայ բարձրացող առնական խոշոր գլուխը դիտել թափանցելու համար ներքինին: Լայն ճակտին վրայ ծփացող սեւ մազեր, աչքեր որոնք երկար թարթիչներուն մէջէն երբեմն խոժոռ կը նային դեմացիներին, լեցուն չրթունքներ ու ամբակուռ կզակ մը որ վճռականութիւն կը ցոլացնէ: Գեղեցիկ էր ու չէր միանգամայն. ահա թէ ինչո՞ւ կը մտածէի, զեղեցկազէտին՝ հակառակ՝ կինը հաւանաբար դաւաճէ պիտի գտնէր զինք:

Կը սիրէի ընկերս իր արկածախնդիր անձնութիւններ համար ու տեսակ մը եղբայր էր դարձած ինծի. տարիներու ընթացքին մեր դասերուն հետ խառնել էինք նաեւ մեր սիրային կանները իրարու:

Եւրոպա ուր դրած առաջին ամիսներուն տարօրինակ նախապաշարումներն ունէր. միջրոպներէն աւելի՝ կիններէն կը վախնար, կը սարսափէր: Ու ահա կը տեսնեմ օր մը որ տանը սպասուհիին բռնուած է, բռնուած անբախտիկ կապերով: Առաջին տեսութեամբ ճանչցեր էի Լօռան, որովհետեւ շատ դիւրամատչելի էր ու յարճակողական դիրքի վրայ: Իսկ ընկերս կինը չափելու իր որոշ ճաշակը ունէր: Լօռան՝ քիչ մը լայնախարիսխ ու բարձրահասակ յեցուն աղջիկ մը՝ դժբախտաբար այդ ճաշակին պատկուան էր: Անգամ մը ընկերս պատմեց նոյն իսկ թէ իրիկուն մը սննեակը գացած է, համբուրած զինք, կուրծքին սեղմած ու աղջիկը շատ ուրախացած իր բազուկներու պրկումէն, ուզած է որ աւելի ուժգին սեղմէ, տրորէ զինք, տրորէ իր բազուկներուն մէջ... Այդ օրը շատ նեղացեր էի, բայց ինքզինքս զսպեցի, որովհետեւ Լօռա ա՛լ այդ տունէն մեկնած էր, որով սիրովէս լրացած: Բայց խարուեր էի, հիմա նաժանկերու շարան մըն էր սկսած ու ընկերս տկարութիւններ մը կ'ունենար իր ժամադրութիւններուն տեղի տալով:

Կը կարծէի կէս ժամուան մէջ զինք պարտութեան մատնել ու գործիս երթալ. այդ ժամը շատոնց է անցած ու ահ կը մնայ տակաւին՝ ժայռի մը պէս անընկճելի: Բայց կեսա՞ք մը, քնկեր մը փրկելու գաղափարը բոլորովին կու-

րացուցած է զիս. պէտք է երկար, երկար խօսիլ, պատմել, բերելու համար իրականութիւնը արեւին տակ: Միեւնոբար զինք կը հրեմ անկողնին վրայ ու ես աթոռ մը կը գրաւեմ իր դիմացը:

— Քարող, նորէ՛ն քարող, կը գոչէ երեսիս հեղնական, բայց կը մնայ իր տեղը, ալ կողքին վրայ ընկողմանած:

— Նստէ՛ հիմա ու մտիկ րէ՛:

Պահ մը կանգ կ'առնեմ սկսելէ առաջ, աչքերս պատուհանէն հորիզոնին յառա՛քնական հանդարտութիւն վերագտնելու համար:

Ճլօռան դուռ որը աղջիկ մը ճանչցած ես ու իր անցեալին մասին ոչինչ գիտես: Նախ վրատահ եղիր թէ ինչ որ պիտի ըսեմ՝ ստոյգ աղբիւր է, ինք անձամբ պատմած մեր տանտիրուհիին, իսկ ես վաւերացուցած եմ իր գիւղացիներէն:

Լիւսթէն գիւղը ծանօթ է քեզի Մէօզի հովիտին մէջ, Նամիւրի եւ Տիմանի միջեւ: Պատերազմը մեծ աւեր է գործած այդ չըլնակին լրայ ու Լօռա աշխարհ կ'սած այդ արեւոտ օրերէն ետք, Ձինադադարի վաղըրդայինն: Հայրը, կառավարական նախկին պաշտօնեայ, հեռու իր ընտանիքէն՝ կը կուռէր խրամատներուն մէջ, մինչ մայրը փոքրիկ օրհարան մը կը պահէր: Ամէնքը կը ճանչնային դիւղին մէջ չքեղ ու լեզուանի թեռնէրը: Այդ կինը տարօրինակ գրաւչութիւն մը ունէր, աշուուական երեւոյթ մը, որ կիրքէ աւելի յարգանք կը ներշնչէր շուրջիններուն: Ահա թէ ինչո՞ւ մինչ գետեղերքի փայլուն սրճարանները յաճախ գատարկ կ'ըլլային՝ իբր ամէն հասակէ բազմութեամբ կը լեցուէր: Ան մասնաւորաբար ժամադրաւարին էր այն նորահաս երիտասարդներուն, որ կը գինովնան զեղանի կնոջ մը անոյշ մէկ նայուածքէն, ժպիտէն ու ձեռքի երբեմնի տաքուկ շուրջանէն: Հոն տեղ ունէին նաեւ յիսուսին ձեռնետած տարէցներ, որոնք աւելի տոգայտող հետաւնքով կը գիտէին տիրուհին ու կը յաջողէին երբեմն քանի մը պաւաթ ըմպելիով անունը զինք իրենց ծոնկներուն վրայ ու զննլ իրենց պաղ ու կարծր դէմքը անոր տակաւին թաքտ ու վառվռուն այտերուն դէմ: Թեռեղ միշտ գուարթ ու ճկուն՝ գիտէր բոլորն ալ գոհացնել:

Պատերազմի ընթացքին պահ մը կը կարծուի թէ ծերեբու և երիտասարդներու զինուորագրումով Թեոէզին աստղը պիտի մարի: Սակայն զէպֆերը ուրիշ կերպարանք կը ստանան, ու սրճարանը նորէն կը լեցուի, այս անգամ դերման զինուորներով: Առաջին օրերուն զիւղը խորթ աչքով կը նայէր նորիկներուն: Ամէն խանութ փակ կը մնար ու փողովուրդը տուններու մէջ ապաստանած: Յետոյ կը համոզուին թէ կարելի չէ շարունակել ու մարմինը իր պահանջներն ունի. ոմանք նոյն իսկ կը լիանան օտար արծաթին հնչեղներէն: Առաջին հրապարակ իշնողներէն մէկը կ'ըլլայ Թեոէզ իր սրճարանին զոները բանալու մամոնայի յորձանքին առջեւ: Գերմանները շատ, շատ կը զուարճանան հոն, ու կը կապուին այդ սրճարանին ինչպէս կապուած էին իրենց զինուորական սեղմ կարգերուն: Իրենց հանդիստի պահերուն միակ սփոփանքն էր, կեանքը իմաստաստրող հնգուոյցը՝ այդ կեանքով լեցուն ու սիրասուն Վալտուհին: Այդ կոշտ ու կոպիկ հասարակ զինուորները աշոր առջեւ կը մոռնային ամէն ցեղային առեւտրիւն, դառնալու համար դիւրաթեք ու անկաարարածներ: Կը յարգէին զինքն ու ինքեթ կ'ըլլային որ աչ իր նուրբ ու կամարուկ լըթուհներէն գերմաններէն քանի մը կոտորտուած բառարտաբերէ:

Թեոէզի համարը կը հասնի մինչեւ գերմանական վերին խաւերը ու հոն կը սկսին յ՝ ճախել նաեւ բարձրաստիճան, սպաներ: Գնդապետ մը անոնցմէ՝ այդ յաճախալային ամենէն հաւատարիմ բնակիչը կը դառնայ: Ան զեղեցիկ էր ու բարձրահասակ, կիրթ շարժումներով: Թեոէզ կեանքին մէջ միայն այդ Գերմանացիէն վախճած էր. առաջին հանդիպումով իսկ կը զգայ որ անոր աչքերը արտասովոր բոց մը ունէին, որուն ջերմութենէն պիտի պարտուէր: Նախ անտարբերութիւն կեղծած էր, բայց կը մատնուի: Իր մէջ երկու զգացումներ զմ առ զմ պայքար կը մղէին: Գիւղը ինչպէս ամէն տեղ՝ իր պատուարները ունի: Իր մէջ գիւղացիի պատանդութիւնը ամէն բանէ վեր էր եղած. շատեր փորձեր էին զայն խորտակել. ան հպարտ էր իր յաղթանակներուն համար. բայց հիմա նոր, անձանօթ զգացում մը հասակ կը

նետէր իր էութենէն, քնազգին մութ խաւերէն քակուելով, և սպառնական դիրք կը բռնէր նահապետական դիւղին զմ յանդիման: Գնդապետը կը կրկնապատկէր իր այցելութիւնները եւ ուշ գիշերին ամենէն վերջ մեկնողը կ'ըլլար սրճարանէն: Թեոէզ միւս կողմէ ունէր կնոջ յատուկ հպարտութիւնը որ մեծ անձնաւորութիւն մը կըրցած էր կախարդել, բայց չէր յանձնուեր: Իրիկուն մը սակայն Գերմանացին բառերու ոյժէն յուսահատ՝ կը դիմէր իր բապուկներու զօրութեանը: Գեղուհին պարտուած էր, բայց ուրախ որ խնդիրը այդ ձևով էր կարգադրուած ու ինքզինքը իր խղճատանքին առջեւ ալ կրնար արդարացնել. ինչ ընէր գիշեր ատեն առանձին չորս պատերուն մէջ, կրնա՞ր զէմ դրնել անոր պողպատէ բազուկներուն երբ նոյն իսկ իրենց զինուորները անոր առջեւ կը նահանջէին: Մանաւանդ որ այնքան գրաւիչ էր, ո՞հ արտիչ, աչքերուն մէջ հրդեհ կար...: Բայց գիւղը այդպէս չէր տրամաբանած երբեք ու չէ ներած իր զաւկին անպատողութիւնը. քնակիչներուն մէջ չլուկ մըն է ծայր կուտայ, իրենց յարաբերութիւնները վերապահ կը դառնան ու մտերմական թեոէզը՝ յորըջումը կը փոխարինուի պաշտօնական ձմատած Թեոէզցով:

Զինադադարը բնաւ չէր խանդավառած զինք, որովհետեւ ինքզինքը կը գտնէր փոխան զեղեցիկ սիրահարի մը՝ պատերազմէն ալ աւելի քայքայուած ծերուկ ամուսինի մը գիրկը: Իր միակ սփոփանքը կ'ըլլայ Լօռայ ծնունդը, որովհետեւ անոր աչքերուն մէջ զբոլմուած կը տեսնէ զնրապետին գրաւիչ նայուածքը: Սակայն այս ծնունդն ալ գիւղացիներուն տունէ տուն փափուկի առաքիւն կը դառնայ որ հեռըցեալէ մ'անձ ու կը խորանայ մանկան անունին համ ընթաց: Իսկապէս ալ տարիներուն հետ երեւան կուգար որ Լօռա վալտնական ոչ մէկ յատկանիշ ունէր: Ան ոչ իր հօրը կը նմանէր եւ ոչ մօրը: Մանօթեթ Ծլալանի ձագ կ'որակէին. իսկ հասարակութեան առջեւ ան ուղեշնորհ կարգին մէջտ իմ ձերբմխ մըն էր պարզապէս: Թեոէզ ամբողջ սիրտը կը դնէ մինչեւ որ իր աղիկը չափահաս կը դառնայ. ո՞րքան, ո՞րքան կը գուրդուրայ անոր վրայ, որովհետեւ անոր մէջ բիւրեղացած կը տեսնէ սիրահարի ու

գաւկի սէրը միանգամայն: Իսկ Լօռա դեռ արբուշէր չհասած ի յայտ կը բերէ արդէն ապօրէն զաւկի յատուկ եղող արտակարգ ուշիմութիւն եւ գեղեցկութիւն: Իր անծանօթ հօրմէն ժառանգած ամուր կազմին մէջ ամփոփուած էր մօրը բարեսիրտ զգայնութիւնը: Շատ, չափ զգայուն էր, ո՛րքան կուլար ամէն անգամ որ հօրը բրտութիւնը կը տեսնէր իր մօրը հանգէպ:

Թեեւզ պատերազմէն վերջ ալ միշտ կը պահէր իր սրճարանը: Ամուսինը վերադարձին անճանաչելի էր, կանխահասօրէն ծեր, ջղազրկու ու աշխատութեան անընդունակ: Տարիներով խրամատներուն մէջ պտուկած սարսափի օրեր անցընելը դիւրին չէր. — զնդակի տարափր ամէն կողմէ ու մղձաւանջը հեղձուցիչ կողերուն՝ գլխուն վրայ: Աշխատելու քանի մը փորձեր րբեր էր, բայց անօգուտ, չէր կրնար կեդրոնանալ ու յարատեւօրէն գործին փարել: Ինք ալ երբեմն գիտակից էր իր վիճակին եւ ի դուր կը ճշդէր հասկնալու թէ ինչու՞ իրեն գէնք աւելած ու մարդասպանութեան զրկած էին: Այս վերլուծումները կ'ընէր իրեն պէս անգործ ու ալլասերած նախկին զինուորներու հետ սեղանի մը շուրջ բազմած գաւաթներ պարելու ատեն: Թեեւզ հոս անձնուէր կին մը կը հանդիսանայ, կը համոզէ թէ ինք պէտք չունի աշխատելու, թէ սրճարանը բուսական է ամբողջ բնտանիքին: Անգործութեան տարիներուն հետ Լօռայի հօր ալլասերումը կը շեշտուէր: Գինին կը խմէր առանց չափի ու կը խմէր մանաւանդ մինչեւ առաւօտ ուրիշ բարեկամի մը եւ ցոփ կիններու ընկերակցութեամբ: Թեեւզ ի դուր կը փորձէր արգելել, ան գինով կուլար տուն, անտեղի կեդրով կը գայրանար ու զինք կը ծեծէր անդադար: Ոնկճ կ'ինը ճիգ մը կ'ընէր գոնէ իր խնայողութիւններուն յետին մնացորդը պահելու: Բայց ան ծեծի բռնութեամբ իր զինիի դրամը յափշտակելով կ'անհետանար: Լօռա չէր գիտէրար ու երբեմն հօրը ծունկերուն ինկած պաղատագին՝ կը յաջողէր անոր մէջ փոթորկող զգացնը զսպել: Երբեմն կ'ենթարկուէր նաեւ ինք մօրը կրած խռտանդուին: Օր մը պարճնալ երբ ծեծէ խուսափելու համար Թեեւզ օտնդուխներէն սարսափահար դուրս կը վազէր՝

կը սահի դետին, իր ձախ ոտքը հետքերով: Երկարատեւ դարձանումէ մը ետք ան մէկ կողմին վրայ կը կազար:

Լօռա ի բնէ զգայուն՝ իր մօրը այդ արկածէն շատ էր ցնցուած: Ան հիմա գիւղին համար հարս ըլլալու տարիքին մէջն էր, բայց իր մօր խղճայի օրինակը հեռու կը պահէր զինք նման յանդուգն մտածումներէ: Երազանքի իր այդ տարիներուն ունեցեր էր քանի մը անիրական, վաղանցուկ սէրեր ու այդչափ: Միայն կը սիրէր որ հանդիպող երիտասարդները ցանկալարոյց աչքերով դիտէին զինք ու ժպտէին, ժպտէին իրեն զմայլանքով: Ու իր այդ ցանկութիւնները կ'իրականանային արդէն սրճարանին մէջ, ուր մօրը թիկունքն էր եղած եւ ուր ամէն դասակարգէ մարդիկ կը յաճախէին: Մէկուն ժպիտ մը ունէր, ուրիշներուն՝ շնորհայի բառեր: Սեղանէ սեղան կ'ոտոտոտէր եղնիկ պէս թէթէ քայլերով: Բայց ասիկա անոր արտաքինն էր միայն, մշտապիտ ու կենսութեան՝ որուն տակ թաքնուած էր աւելի խոհուն ու մեղամաղտոտ ներաշխարհ մը: Կը հետաքրքրուէր մասնաւորաբար պատահական անցողիկ երիտասարդներով, որոնք ունէին վէտովեւ տուն մ'ապեր ու թուխ, արեւակէզ դէմքեր: Օ՛հ, գիւղին գիւղերը յիշեցնող անոնց խորունկ ու խօստեւ աչքերը իր մէջ կ'արթնցնէին տարաշխարհիկ զգայութիւններ: Հանգիստի ժամերուն միակ հաճոյցն էր բնութեան մէջ շրջապայլ ու իր երազներուն հետ պտըտիլ: Շատ կը սիրէր Մեօզը, բայց կ'ուզէր որ անոր ալիքները աւելի արագ թաւալէին իր մտածումներուն չափ արագ: Հապա անոր վրային սահող զրօսանաւէ՛րը. անոնք իրեն համար աշխարհ մըն էին տեղափոխուող ու կը դիտէր զանոնք անյաբօրէն. ո՛րքան պիտի փախաբէր որ գետը ուղիղ գիծով ընթանար, աւելի երկար ատեն վայելելու համար այդ նաւերը: Գծօն էր նոյնպէս կտաւալարներու փախուստէն. թէեւ պիտի ուզէր որ ինք մէջը ըլլար ու անոնք փախչէին անտեսանելի թեւերով, շատ շատ արագ: Ինք ալ չէր գիտեր իր ուզածը ու երբեմն կ'ապրտամբէր ինքզինքին դէմ: Միայն Հիսաթափ կը մնար երբ վայրաշարժը կը կորսուէր փապուղիին մէջ իր հտեւ ձգելով ծուխի ամպ մը

իր երազներուն պէս տփգոյն ու յարափոփոխ: Յուսայլումի այդ պահերուն իրեւել լուռ սփոփանք՝ միայն դետեղերքի վիթխարի ժայռախումբն է որ կը կանգնէր աչքերուն առջեւ արհամարհական ու անպարտեղի, անձնեւէին ու փոթորկին դէմ: Ու գիշերները պատուհանէն կախուած՝ իր երեւակայութիւնը նորէն պալատներ կը կառուցանէր, այս անգամ լոյսի կախարդական սիւներով, որոնք ջուրին վրայ կը ծփայլին դիմացի ժայռախումբին թառած Պելլիտներէն եւ մօտակայ արձարաններէն:

Այդ պալատները կը կանգնէր ան հեռու, հեռու՝ երկիրներու մէջ, երկիրներ որոնց անունը լսած էր միայն. անոնք երբեմն կ'ըլլային Եգիպտոս, Հնդկաստան, անանուն կողմներ: Ափրիկէն իսկապէս անմահ պէտք էր ըլլար իր անպապանքութեամբ անգլին հեշտանքովը: Հապա իրենց Քոնկոն, որուն մասին անքան բան լըսեր էր. ի՞նչ փոյթ թէ անոր արեւը շատ կ'իզի էր ու բնակիչները վարենի. կ'ուզէր հեռանալ, երթալ հեռու, հեռու՝ երկիրներ...:

Իրիկուն մը լոռա շատ կը վախնայ երբ իր հօրը բարեկամը Ժողէֆ սրահան կը մտնէ կէս մը գիշերով: Այդ օր մայրը քաղաք ագացած էր ու ինք առանձին կը սպասարկէր: Միշտ սփգանքով դիտած էր այդ մարդուն բծախառնորդ դէմքը ու կը զարհուրէր անոր լպիրշ շարժումներէն: Դեռ երէկ աղտոտ արտայայտութիւններ ունեցեր էր իրեն. բայց հիմա տարօրինակ, անբացատրելի նախազգացում մը իր սիրտը կը ճմլէր: Որքան կ'աշխատէ որ ան քիչ խմէ ու ի՛նչ ճիւղեր չէր ըրած որ միւս յաճախորդները քիչ մը աւելի երկար մնային հոն: Երբ սրահանք կը պարպուի՝ լոռա դռները փակելէ առաջ կը փորձէ մարդը քաղաքավարօրէն ճամբու գիշեր: Ժողէֆ դիւանային ժպիտ մը կ'ունենայ, գինին իր մէջ անասունի ցանկութիւնները բորբոքած էր. չըմբռած աչքերը աղջկան վրայ պտտցնելով ոտքի կ'ելլէ: Մէկ ոստումով արդէն անոր սպիտակ ձեռքը կը սրսփար իր երեքմեծի մեքենավարի կոշիկ ու ջղուտ ասիւն մէջ: Լոռա բնազդային ընկերկում մը կ'ընէ, բայց կը զգայ անոր վաւաչուտ շրթունքներուն գարշաճը իր քերթին վրայ: Իսկապէս հակադրելի էր այդ

մարդը իր կէս մը ճաղատ դլուխով եւ ախտաւորի իր կարճատես աչքերով: Երկար, երկար կը մաքառէ, փորձելով ձեռքադատուիլ անոր լրագրականութեան շղթայումէն: Այդ պահուն իր կանայցի զգայուն ունեղբերը հոտ մը կ'անոնէին մարդուն վրայէն որ գինիէն չէր երբեք եւ որ իրեն կը յիշեցնէր բլուրներուն վրայ ոյխարհեություն մէջ պտրտող կատարած խոլը: Կը յիշէր թէ ինչպէս այդ ոյխարհները լեղապատառ իտեմապի կը մատնուէին անոր առջեւ: Լոռա անգամ մըն ալ կը ցնցուի ու ա'լ բան չի յիշեր, ուշաթափ եղած էր: Երբ կ'արթննայ՝ կէս գիշերը անց էր արդէն, ու կ'ամ չնայ ինքզինքնէն, կ'ամ չնայ, որովհետեւ կը տեսնէ որ կ'խառնարկ էր, զգեստները բզիկ բզիկ գետնին վրայ:

Թեռնէք քաղաքէն վերադարձին կ'այլայլէ իր աղջկան փոփոխութեանը վրայ, աչքերը սեւ փոսի մը մէջ ինկեր էին ու ան սովորականէն աւելի տխուր էր եւ սակաւախոս: Գար նաեւ դէմքին վրայ մեղապարտ նայուածք մը, բայց ոչ չինչ կը խոստովանէր: Փանի մը շարաթ յետոյ առուտ ու զարմանք մեծ կ'ըլլայ երբ կը տեսնէ որ իր չրթներուն շուրջ կ'ըր, թարախոտ բշտիկներ մը ելեր էին: Մայրը հիմա կ'ենթադրէ թէ իր բացակայութեան հայրը բիրտ ընթացք մը ունեցած է ու աղջիկը վախցած: Իսկապէս ալ ժամանակ մը վերջ այդ նշանները կ'անհետանան: Բայց Լոռա սեւակախոսին ներքին, ընդհանուր անհանդսիրութիւն մը կը զգար. երակներուն մէջ տարօրինակ բորբոքում մը կար իրեն անհասկանալի: Մայրն ալ մտահոգ էր: Ամիսներ ետք քիչ մնաց խնեթեանար. իր ձիւնի ման սպիտակ մարմինը ծածկուած էր ամբողջ նորէն վարդագոյն քիժերով, այո՛, այո՛, ամէն տեղ: Ալ անկարող էր դիմանալ ու կ'երթայ նետուիլ լալահառաջ՝ իր մօրը գերկը: Օ՛հ, այդ օրուան խոստովանութիւնը ամենէն սահմանակցուցիչն էր: Երբեք մայր ու աղջիկ այսքան մտերմական չէին կեցած դէմ առ դէմ: Թեռնէք ոտքիկանաւուն կը վազէ: Նոյն օրն իսկ Ժողէֆ բանտ էր ու գիւրը անձնաթիւ անոր կրկնակի ոճրադործ մը ըլլալուն:

Լոռա կը խնամուէր քաղաքի կառավարական հիւանդանոցին մէջ: Յուսահատ ու տաժա-

նազին օրեր կ'անցընէ՝ հոն, որովհետեւ պէտք տեսած էին նաեւ բժշկական գործողութեան մը, իր մէջէն արմատախիլ ընելու համար գինովին ձգած ախտաւոր սաղմը: Անգամ մը մօրը բացակայութեան երբ շուրջը կը դիտէր, իր գլխուն կողմը տախտակի մը վրայ քանի մը բառ կը կարդայ «Փրանկախիտ բ. աստիճանի»: Ամբողջ մարմնով կը ցնցուի, ատանց գիտնալու թէ ինչու: Լսած էր միայն թէ ամօթային հիւանդութիւն մըն է և Մայրը շատ կ'աշխատի իր մտահոգութիւնները փարատել: Լօռան վիշտը սուրան դարմանումէ վերջ գիւղ կը հասնի աշքերը տկարացած ու զլխուն մազերը զգալիօրէն թափած:

Թեւեղ իր աղջկան հիւանդութեամբ սրճարանը փակած էր ու հիմա կ'աշխատէր ուր՝ քով՝ բայց կրկնակի վիշտերու տակ թառամեր էր այդ երբեմնի գեղունիին: Իր հիւանդութիւնը շատ կարճատեւ կ'ըլլայ հոգին երթալէ առաջ: Յուզարկաւորութիւնը կը կատարուի յորդառատ անձրեւի մը տակ ու մեծ բազմութեան մը ներկայութեամբ: Այդ օրը ամբողջ գիւղը եկած էր իր արցունքներով ըսելու անձնուէր կնոջ թէ ներած է անոր տարիներ առաջուան մեղքը: Շատ կուլայ նոյնպէս իր գինով ամուսինը, ու միայն այդ օրն է որ պատերազմէն ի վեր կըրցած էր դիմիկէն հեռու մնալ:

Լօռա ալ չէր կրնար ապրիլ գիւղը իր բիրտ հօրը քով, ու բարեկամներու միջամտութեամբ կուգայ Պրիւսիլ սպասաւորութեամբ հաջորդահեռու: Երկու տարուան ընթացքին արդէն քանի մը տեղ փոխած է, յաւելումէ յաւելում դիմելով շնորհիւ իր ուշիմութեան ու ջանասիրութեան: Ինչպէս ուրիշներ՝ ես ալ չեմ հաւատացած իր արմատական բուժումին: Գիտե՞ս թէ ինչու ամէն երեքարթի կէսօրէ ետք արձա-

կուրդ կ'առնէ. դարմանատան օրն է, ուր կ'երթայ ներարկուելու: Միշտ այդ օրն է ուղած իր արձակուրդը: Այն երազային աղջիկէն շատ քիչ բան մնացած է հիմա. պարասրահները 'եղած են իր անցեալը թողարկող միակ բարեկամները: Ու մարդիկ միշտ շահագործած են անոր տկարութիւնը: Անկեալը սեւէ նեցուկի մը պէտքը կը զգայ ու ան նետուած է հանդիպող երիտասարդին գիրկը: Քաղաքի եռուզեռն ու իր անտէր վիճակը միայն ատոր ձեռնտու են եղած: Խեղճ տղայ, գուցէ դուռն իր առաջին սէրը ըլլաս, բայց 'բերք' առաջին երիտասարդը: Ան շատ է փոխուած, թէ՛ մարմնով եւ թէ՛ հոգեկան գեղեցկութեամբ: Միայն երբեմն, առանձնութեան մէջ, ինքնադիտակցութեան եկած պահերուն՝ հին Լօռան է որ կ'արթննայ իր մէջ, երթալու համար հեռու, շատ հեռու երկիրներ: Ահա թէ ինչու քեզի ուղղած վերջին նամակին մէջ գծած է նաւ մը առաջաստները պարզած դէպի կախարդական Արեւելք: Ու այդ քայքայուած, ախտաւոր աղջիկը գոնէ իր երազը ապրելու համար դիտնաս թէ ինչ կողկողադին տառապանքով կը հարցնէ իր շուրջի մտերիմներուն ու բժիշկին տեսականօրէն. — Ի՞նչ, բոլորովին բուժուած եմ, կրնամ, կըրնամ՝ ամուսնանալ օր մը...»

Ալ չէի կրնար շարունակել: Ընկերս իր նախկին դիրքին մէջն էր, թէեւ քիչ մը աւելի գլուխը հակած ու մէկ ձեռքը ձախաւքօրէն դէմքին դրած իր արցունքները պահելու համար ինձմէ: Հաւանաբար դիմացի հայելին դիւ ալ յանդիմանէր, բայց աւելորդ դտայ ինքզինքս ծածկել, որովհետեւ մութը պատուհանէն ներս էր սողոսկեր, գգոյշ, աննշմար քայլերով:

ՅԱՐՈՒԹ ԷՍԵԿԻԻԼԵԱՆ (Արեւիւրգի)